# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

12 մարտի 2019 թվական

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 (ութ) անդամներ:
Բացակա էին Հայկազ Բաղդասարյանը, Վարդան Սուքիասյանը և Հայկ Վարդևանյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Գևորգ Հայրապետյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Սարգիս Ղազարյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանը, «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը:

**<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>**

**<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>**

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են ութը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12 –Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 12-ի հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին,

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,

3)2018 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության մասին,

4)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին,

5)Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության սանհանգույցների և թվայնացված հետազոտման սենյակի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին,

6)Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին,

7)«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը հաստատելու մասին,

8)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 70-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

9)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 69-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

10)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

11)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 66-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

12)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

13)Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին,

14)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին,

15)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 4 և 22 բնակարանները Տաթևիկ Խաչիկի Ավետիսյանին անհատույց օտարելու մասին,

16)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 66 բնակարանը Տիրուն Հովհաննեսի Ազարյանին անհատույց օտարելու մասին,

17)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 33 բնակարանը Հասմիկ Արծրունու Մեհրաբյանին անհատույց օտարելու մասին,

18)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 114 բնակարանը Հերիքնազ Երանոսի Սանթրոսյանին անհատույց օտարելու մասին,

19)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 32 և 35 բնակարանները Միշա Ռազմիկի Վարդանյանին անհատույց օտարելու մասին,

20)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 58 բնակարանը Վարդանուշ Նուշերվանի Գասպարյանին անհատույց օտարելու մասին,

21)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 102 բնակարանը Մագթաղ Դավիթի Գրիգորյանին անհատույց օտարելու մասին,

22)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 51 բնակարանը Քնարիկ Գուրգենի Բարսեղյանին անհատույց օտարելու մասին,

23)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 72 բնակարանը Սաթենիկ Լևանի Կիրակոսյանին անհատույց օտարելու մասին,

24)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 55 բնակարանը Կարո Արամի Հարությունյանի ընտանիքին անհատույց օտարելու մասին,

25)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 14 բնակարանը Աշխեն Ամիրխանի Մարգարյանին անհատույց օտարելու մասին,

26)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 7 բնակարանը Ալբերտ Մկրտչի Վարդանյանին անհատույց օտարելու մասին,

27)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 8 և 78 բնակարանները Բուրուջ Մարտինի Մանասյանին անհատույց օտարելու մասին,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 04-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27–Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և 29-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 71-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և պահուստային ֆոնդից գումար հատկացնել՝ որոշմամբ հաստատված հավելվածի 1, 2, 3 և 6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 05-Ն/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը եկամուտների մասով՝ 305386,2 հազար դրամ, ծախսերի մասով՝ 340927,7 հազար դրամ, տարեվերջի ազատ մնացորդ՝ 41804,4 հազար դրամ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 06-Ա/

*Լսեցին*

***2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Ընդունել ի գիտություն 2018 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 07-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 08-Ա/

*<u>Լսեցին</u>*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ««ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության սանհանգույցների և թվայնացված հետազոտման սենյակի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 09-Ա/

*<u>Լսեցին</u>*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված համայնքում հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհներ, կառուցված մայթեր ունենալու անհրաժեշտությամբ՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 10-Ա/

*Լսեցին*

*«ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ» կետի և հիմք ընդունելով «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի զեկուցագիրը՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 11-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27–Ի N 70–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 04-ի N 259-Ա հրամանը և «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի զեկուցագիրը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2019 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 70–Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելված N 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 12-Ա/

*__Լսեցին__*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*//Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 69–Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 13-Ա/

*Լսեցին*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի N 06-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/*Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՍՅԱՆ*/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին» N 06-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման նախաբանում «2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 20-Ն» բառերը փոխարինել «2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 61-Ն» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 14-Ն/

*Լսեցին*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27–Ի N 66-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/*Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՍՅԱՆ*/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ և 37-րդ հոդվածների՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի ««Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 66-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 15-Ա/

__*Լսեցին*__

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՄԱՏՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի գույքագրման փաստաթղթերը՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝

1) Համայնքի վարչական տարածքի հողերի սեփականատերերի մասին տեղեկանքը (15.02.2019թ. դրությամբ)՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Պաշարների (ներառյալ փոքրարժեք կամ արագամաշ առարկաների) գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) Հիմնական միջոցների գույքագրման ցուցակները՝ համաձայն հավելված N 3-ի.

4) Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի և ստացման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 4-ի.

5) Մատակարարումների գծով կրեդիտորական պարտքերի և վճարման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 5-ի.

6) Բյուջեի հետ հաշվարկների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 6-ի.

7) Կանխիկ դրամական միջոցների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 7-ի.

8) Անկանխիկ դրամական միջոցների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 8-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 16-Ա/

*Լսեցին*

***ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ|*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, ավագանին որոշում է.

1.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ 1 հատ Մերսեդես - Բենց E 240 մակնիշի մարդատար ավտոմեքենա, թողարկման տարին՝ 1998 թվական, հաշվեկշռային արժեքը՝ 5 800 000 դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 17-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ|*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի (վկայական՝ N 26022019-07-0069, կադաստրային ծածկագիր՝ 07-055-0212-0140) 2.5 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը օտարելու համար:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի աճուրդային մեկնարկային գինը հաստատել 987500 (ինն հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ, մեկնարկային քայլը՝ 49375 (քառասունինը հազար երեք հարյուր յոթանասունհինգ) դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը 5000 (հինգ հազար) դրամ է:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 18-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 49 ՇԵՆՔԻ 4 ԵՎ 22 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Տաթևիկ Խաչիկի Ավետիսյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 14.34 քմ ընդհանուր մակերեսով 4 բնակարանը (նախկին 1-ին հանրակացարան, թիվ 22 սենյակ) և 24.55 քմ ընդհանուր մակերեսով 22 բնակարանը (նախկին 1-ին հանրակացարան, թիվ 51-52 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Տաթևիկ Խաչիկի Ավետիսյանին՝ ծնված 1964 թվականի մարտի 21-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Տաթևիկ Խաչիկի Ավետիսյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 19-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 49 ՇԵՆՔԻ 66 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏԻՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Տիրուն Հովհաննեսի Ազարյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 26.27 քմ ընդհանուր մակերեսով 66 բնակարանը (նախկին 1-ին հանրակացարան, թիվ 98-99 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Տիրուն Հովհաննեսի Ազարյանին՝ ծնված 1955 թվականի դեկտեմբերի 03-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Տիրուն Հովհաննեսի Ազարյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 20-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 49 ՇԵՆՔԻ 33 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՍՄԻԿ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Հասմիկ Արծրունու Մեհրաբյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 27.61 քմ ընդհանուր մակերեսով 33 բնակարանը (նախկին 1-ին հանրակացարան, թիվ 29-34 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Հասմիկ Արծրունու Մեհրաբյանին՝ ծնված 1966 թվականի մարտի 15-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հասմիկ Արծրունու Մեհրաբյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 21-Ա/

***Լսեցին***

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 114 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԵՐԻՔՆԱԶ ԵՐԱՆՈՍԻ ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Հերիքնազ Երանոսի Սանթրոսյանի կողմից լիազորված անձ Արտուր Սանթրոսյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 38.68 քմ ընդհանուր մակերեսով 114 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 126, 127 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Հերիքնազ Երանոսի Սանթրոսյանին՝ ծնված 1954 թվականի նոյեմբերի 25-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հերիքնազ Երանոսի Սանթրոսյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 22-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 32 ԵՎ 35 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՄԻՇԱ ՌԱԶՄԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ|*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Միշա Ռազմիկի Վարդանյանի կողմից լիազորված անձ Հայկասար Առաքելյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 13.9 քմ ընդհանուր մակերեսով 32 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 36 սենյակ) և 22.13 քմ ընդհանուր մակերեսով 35 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 40 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Միշա Ռազմիկի Վարդանյանին՝ ծնված 1953 թվականի հունվարի 09-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Միշա Ռազմիկի Վարդանյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 23-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 58 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐԴԱՆՈՒՇ ՆՈՒՇԵՐՎԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ|*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային

սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Վարդանուշ Նուշերվանի Գասպարյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 44.39 քմ ընդհանուր մակերեսով 58 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 66, 67 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Վարդանուշ Նուշերվանի Գասպարյանին՝ ծնված 1967 թվականի մարտի 19-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վարդանուշ Նուշերվանի Գասպարյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 24-Ա/

*__Լսեցին__*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 102 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՄԱԳԹԱՂ ԴԱՎԻԹԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Մագթաղ Դավիթի Գրիգորյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 27.69 քմ ընդհանուր մակերեսով 102 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 146 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Մագթաղ Դավիթի Գրիգորյանին՝ ծնված 1980 թվականի դեկտեմբերի 06-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մագթաղ Դավիթի Գրիգորյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 25-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 51 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔՆԱՐԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Քնարիկ Գուրգենի Բարսեղյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 16.9 քմ ընդհանուր մակերեսով 51 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 57 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Քնարիկ Գուրգենի Բարսեղյանին՝ ծնված 1960 թվականի հոկտեմբերի 13-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Քնարիկ Գուրգենի Բարսեղյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 26-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 72 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԱԹԵՆԻԿ ԼԵՎԱՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Սաթենիկ Լևանի Կիրակոսյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 85.9 քմ ընդհանուր մակերեսով 72 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 136, 148 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Սաթենիկ Լևանի Կիրակոսյանին՝ ծնված 1978 թվականի օգոստոսի 05-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սաթենիկ Լևանի Կիրակոսյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 27-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 55 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԿԱՐՈ ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Կարո Արամի Հարությունյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 15.87 քմ ընդհանուր մակերեսով 55 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 62 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Կարո Արամի Հարությունյանի երկու անձից աղկացած ընտանիքին.

ընդհանուր բաժնային սեփականատերեր համարել՝
Կարո Արամի Հարությունյանին՝ ծնված 1967 թվականի փետրվարի 06-ին,
Գայանե Սարգսի Հարությունյանին՝ ծնված 1970 թվականի սեպտեմբերի 11-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Կարո Արամի Հարությունյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 28-Ա/

*Լսեցին*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 14 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՇԽԵՆ ԱՄԻՐԽԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*\/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Աշխեն Ամիրխանի Մարգարյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 103.63 քմ ընդհանուր մակերեսով 14 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Աշխեն Ամիրխանի Մարգարյանին՝ ծնված 1968 թվականի հուլիսի 25-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Աշխեն Ամիրխանի Մարգարյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 29-Ա/

***Լսեցին***

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ 7 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*ԶԵԿ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ալբերտ Մկրտչի Վարդանյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 34.35 քմ ընդհանուր մակերեսով 7 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 7,8 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Ալբերտ Մկրտչի Վարդանյանին՝ ծնված 1954 թվականի դեկտեմբերի 28-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալբերտ Մկրտչի Վարդանյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 30-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՅԻ 50 ՇԵՆՔԻ 8 ԵՎ 78 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԲՈՒՐՈՒՋ ՄԱՐՏԻՆԻ ՄԱՆԱՍՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Բուրուջ Մարտինի Մանասյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 22.2 քմ ընդհանուր մակերեսով 8 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 9 սենյակ) և 13.68 քմ ընդհանուր մակերեսով 78 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան, թիվ 78 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Բուրուջ Մարտինի Մանասյանին՝ ծնված 1947 թվականի մայիսի 25-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Բուրուջ Մարտինի Մանասյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 31-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ օրակարգի հարցերից դուրս ևս երկու հարց կա՛ լսելու, քննարկելու և համաձայնության գալու, որոնցից մեկը սոցիալական բնույթի է: Նա նշեց, որ համայնքի ավագանու կողմից հաստատված սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներով մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը

սահմանված է 50 հազար դրամ, սակայն սեփական լիազորությունների իրականացման կարգով սահմանված է, որ հրատապ լուծում պահանջող դեպքերում համայնքի ղեկավարը իրավունք ունի համայնքի սեփական լիազորության իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացնել ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ՝ այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում:

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Աննա Սահրատյանը: Նա ասաց, որ Բյուրեղավան համայնքի սոցիալական աջակցության հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է Բյուրեղավան քաղաքի 34 շենքի 42 բնակարանի բնակիչ Վարդան Գրիգորյանի ընտանիքի սոցիալական վիճակը և պարզվել, որ Վ. Գրիգորյանի որդուն՝ Նարեկ Գրիգորյանին 2014 թվականին բժիշկներն ախտորոշել են օստեոսարկոմա հիվանդություն, որը համարվում է ծանր ոսկրային հիվանդություն: Պահանջվում է երկարատև բուժում և մեծ ֆինանսական ծախսեր: Երեխային երկու անգամ Ռուսաստանի Դաշնությունում վիրահատել են, սակայն պարզվել է, որ անհրաժեշտ է ևս մեկ վիրահատություն: Հանրային հեռուստատեսությամբ <<Եթե բոլորը…>> հաղորդաշարը անդրադարձել է Նարեկ Գրիգորյանի հիվանդությանը և վիրահատության համար անհրաժեշտ 50.000 եվրո գումարը հավաքելու նպատակով բանկում բացվել է հաշվեհամար:

Համայնքի ղեկավարն առաջարկեց համայնքի բյուջեի սոցիալական ծախսերի համար նախատեսված գումարներից Նարեկ Գրիգորյանին տրամադրել 100.000 դրամ: Ավագանին միաձայն հավանության արժանացրեց առաջարկությունը:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց օրակարգից դուրս երկրորդ հարցը, որը վերաբերվում էր համայնքի մանկապարտեզին: Նա նշեց, որ մանկապարտեզում ազատ տեղեր կան և նկատի ունենալով մանկապարտեզ ընդունվելու մեծ պահանջարկը, առաջարկում է յուրաքանչյուր խմբում 5 լրացուցիչ տեղ ավելացնել մինչև ս/թ օգոստոսի 1-ը և դրա նախադեպը կա: Բացակայությունների պատճառով 136-ի փոխարեն օրական միջինը 100 երեխա է հաճախում մանկապարտեզ: Որպեսզի մանկապարտեզի հզորությունը առավելագույնս օգտագործվի, առաջարկվում է ավելացնել 20 լրացուցիչ տեղ: Ավագանին միաձայն հավանության արժանացրեց առաջարկությունը:

Հակոբ Բալասյանը նշեց նաև, որ նախատեսվում է գործարկել համակարգչային Online ծրագիր, որտեղ պարզ կերևա երեխաների մանկապարտեզ ընդունելության շարժը՝ գործընթացն ավելի թափանցիկ դարձնելու համար:

Ավագանու նիստն ավարտվեց:

**Ավագանու անդամներ՝**

ԳԵՈՐԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ ______________

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ ______________

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ______________

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ ______________

ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ ______________

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ______________

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ______________

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ ______________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝______________Լ. ԱՎՈՒՇՅԱՆ